



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն և
երևանյան գրասենյակ

ԵԱՀԿ գրասենյակը աջակցում է շրջակա միջավայրի կառավարման վերաբերյալ քննարկմանը

2009թ. նոյեմբերի 4, Ծաղկաձոր, Հայաստան. Հայաստանի պաշտոնյաները և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները այսօր Ծաղկաձորում մեկնարկեցին տեղական ինքնակառավարման մակարդակում բնապահպանական մարտահրավերների շուրջ 2-օրյա սեմինարը:

Միջոցառումը կազմակերպել էր Նորվեգիայի Ֆրիդոլոֆ Նանսեն ինստիտուտը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, և ՀՀ բնապահպանության և տարածքային կառավարման նախարարությունների հետ համագործակցությամբ:

«Արդյունավետ շրջակա միջավայրի պաշտպանությունը ներառում է թափանցիկ և հաշվետու վարչարարություն բոլոր մակարդակներում: Իշխանությունների և հասարակության համատեղ ջանքերը կօգնեն պաշտպանել բնապահպանական իրավունքները թե՛ տեղական և թե՛ ազգային մակարդակով», նշեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տնտեսական և բնապահպանական ծրագրի պատասխանատու Քրիստոֆ Օպֆերմանը:

Տեղական ինքնակառավարման իշխանությունների, մարզային բնապահպանական և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցեցին սեմինարին, քննարկելով տեղական ինքնակառավարման մակարդակում բնապահպանական իրավունքների պաշտպանման ուղիները, բնապահպանական կառավարման միջազգային փորձը և Հայաստանում Օրիուսի կոնվենցիայի իրագործումը:

Օրիուսի կենվեցիան ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի շրջակա միջավայրի վերաբերյալ պայմանագիր է. այն ներառում է տեղեկատվության մատչելիությունը, հանրության մասնակցությունը որոշումների կայացման հարցում և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիությունը: ԵԱՀԿ-ի աջակցությամբ ստեղծված և գործող հասարակական բնապահպանական տեղեկատվական կենտրոնների /Օրիուս կենտրոններ/ ներկայացուցիչները մասնակցեցին սեմինարին: Օրիուս կենտրոնները կապող օղակ են բնապահպանական ՀԿ-ների և պետական ատյանների միջև:

«Միջազգային կառավարման գործիքների մասին գիտելիքը արժեքավոր ներդրում կլինի Հայաստանում ինքնակառավարման մարմինների բարեփոխման գործում», ասաց Ֆրիդոլոֆ Նանսեն ինստիտուտի ղեկավար Փիտր Յոհան Շայը:

«Սեմինարի մասնակիցները բնապահպանական կառավարման արդյունավետ մոտեցումներ առաջ բերեցին: Այս միջոցառումը նպաստեց Օրիուս կենտրոնների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ավելի ակտիվ համագործակցությանը», ասաց Աշոտ Գիլոյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ինքնակառավարման բաժնի ղեկավարը:

Օրիուսի կոնվենցիայի վեբկայքը. <http://www.unece.org/env/pp/>